

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊՍՏԱՄԽԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԴԻՄՈՒՄՈՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴՍՏԱՐԱՆԻ ՍԱՆԿՑԻԱՆ

Հայաստանի Հանրապետության դատական, քաղաքացիական, քրեական և վարչական դատավարության օրենսգրքերով, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է դատավարությանը մասնակցող փաստաբանին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Փաստաբանների պալատ դիմելու դատարանի իրավունքը:

Փաստաբանների պալատ դիմելն իրականացվում է նույն դատական նիստում կայացվող դատարանի առանձին որոշմամբ: Փաստաբանի նկատմամբ նախատեսված դատական սանկցիան պարտադիր հիմք է վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար:

Դատարանի կողմից Փաստաբանների պալատին ներկայացված դիմումներից մեկով Պալատի խորհուրդը գտել է, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքեր չկան, քանի որ փաստաբանի կողմից քրեական գործով նշանակված դատական նիստին չներկայանալը ունեցել է հարգելի պատճառներ, այն է՝ նույն օրը, նույն ժամին նշանակված երկու դատական նիստերին վերջինս չէր կարող միաժամանակ մասնակցել, իսկ երկու դատավորներից որևէ մեկին նախապես իր չներկայանալու մասին հայտնելու հնարավորությունից զրկված է եղել, քանի որ միայն դատական նիստերի դահլիճ ներկայանալուց հետո է պարզել, թե դատավորներից ով է դատական նիստ իրականացնելու նշված դահլիճում:

Մեկ այլ գործով Պալատի խորհուրդը նույնպես գտել է, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքեր չկան, քանի որ քրեական գործով դատաքննության փուլում ամբաստանյալին դատական նիստերի դահլիճից հեռացնելուց հետո նրա փաստաբանները, Դատարանին տեղյակ պահելով, որ լիազորված չեն վստահորդի բացակայությամբ պաշտպանել նրա շահերը ու դատական նիստերի դահլիճում քաղաքացիների շարքում, տեղ զբաղեցնելով, նպատակ են ունեցել չգործել ի վնաս վստահորդի շահերի և իրենց անհամաձայնությունն են արտահայտել դատական նիստը նախագահողի գործողությունների դեմ: Վերոգրյալը Պալատի խորհրդի կողմից չի գնահատվել որպես դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորում:

Մեկ ուրիշ գործով Պալատի խորհուրդը գտել է, որ փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքեր կան: Խորհուրդը գտել է, որ անհիմն են փաստաբանների պնդումներն առ այն, որ իրենց կողմից դատական նիստին ներկայանալու պարագայում, դատարանը միանշանակ ավարտելու էր գործով դատաքննությունը: Նման եզրահանգման Պալատի խորհուրդը եկել է հաշվի առնելով մի շարք հանգամանքներ՝ մասնավորապես այն, որ դատական նիստից հետո մինչ Պալատի խորհրդի կողմից սույն որոշման կայացման օրը նույն դատավորի նախագահությամբ դեռ շարունակվել է խնդրո առարկա քրեական գործով դատաքննությունը, ինչից ելնելով՝ Խորհուրդը գտել է, որ դատարանը որևէ նպատակ չի ունեցել ցանկացած գնով ավարտել գործով դատաքննությունը: Խորհուրդը նաև գտել է, որ փաստաբանները չեն գտնվել անելանելի վիճակում, պարտավոր են եղել ներկայանալ նշանակված դատական նիստին, իսկ դատական նիստին չներկայանալով՝ խախտել են Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4-րդ գլխի 4.1 կետի պահանջները:

Մոսկվայի փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը 2014 թվականի դրությամբ ստացել է 23 դիմումներ դատարաններից, որոնցից 11-ը կապված են

փաստաբանի կողմից նշանակված դատական նիստին չներկայանալու հանգամանքի հետ: Դրանց մի մասը Հանձնաժողովի կողմից մերժվել է, քանի որ դիմումները դատարանների կողմից բավարար հիմնավորված չեն եղել, իսկ մի մասով էլ բավարարել է: Հանձնաժողովը հարգելի չի համարել փաստաբանների կողմից ներկայացված բացատրությունները և հարուցել է կարգապահական վարույթներ՝ գտնելով, որ դատական նիստի մասին տեղյակ լինելը, սակայն նիստի մասին ծանուցված չլինելու պատճառով չներկայանալը, կամ նախապես տեղյակ լինելը, որ մյուս ամբաստանյալի փաստաբանը դատական նիստին չի ներկայանալու, նիստը հետաձգվելու է ու նիստին չներկայանալը հիմք են կարգապահական վարույթ հարուցելու համար:

Դատարանների կողմից դիմումներ են ներկայացվել նաև փաստաբանների կողմից նիստերի դահլիճը լքելու վերաբերյալ: Փաստաբանների հիմնավորումները կապված են եղել այն հանգամանքների հետ, որ դատարանը նիստը սկսել է աշխատանքային ժամի ավարտից հետո, որ վերջիններս ծանուցված չեն եղել, սակայն գտնվելով նույն դատարանում, պատահաբար իմացել են դատական նիստի մասին: Սակայն Հանձնաժողովը գտել է, որ նման հիմնավորումները չեն կարող հարգելի լինել և հարուցել է կարգապահական վարույթներ¹:

Տաթևիկ Շալջյան
ՀՀ փաստաբանների պալատի
երիտասարդական խորհուրդ

¹ <http://www.apmo.ru/?show=publications>